

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ EY-10/22
ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ք.Երևան

«04» նոյեմբերի 2022թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս՝ գործադիր տնօրեն Հ. Մովսիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Իմիջ Մ.Գ.» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Գովազդակիր» ի դեմս՝ գլխավոր տնօրեն Ա. Կարապետյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, միասին անվանելով «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագրով Գովազդակիրը պարտավորվում է Գովազդատուի հանձնարարությամբ պայմանագրով նախատեսված և Պայմանագրի անբաժանելի մաս կազմող գովազդային պատվերում նշված պայմաններով մատուցել գովազդային (արտաքին գովազդի) ծառայություններ այսուհետ՝ «Ծառայություններ», իսկ Գովազդատուն պարտավորվում է վճարել դրանց համար:

1.2. Ծառայությունների նկարագրությունը, ծավալները ինչպես նաև Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ մյուս այլ պայմանները (այսուհետ՝ «Պայմաններ») նախապես բանակցվում ու համաձայնեցվում են Կողմերի միջև, որից հետո տրվում է համապատասխան գովազդային պատվերը:

1.3. Ծառայությունները մատուցվում են 2022 թվականի նոյեմբերի 16-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 11-ը ներառյալ:

1.4. Եթե գովազդային պատվերներում սահմանվում են Պայմանագրից տարբերվող պայմաններ, ապա գործում են գովազդային պատվերներում սահմանված պայմանները:

1.5. Ծառայությունները մատուցված են համարվում Կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից Ծառայությունների մատուցման Գովազդակրի դուրս գրված հարկային հաշիվը Գովազդատուի կողմից վավերացվելուց հետո:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Գովազդակիր պարտավոր է՝

2.1.1 Մատուցել Ծառայությունները համապատասխան պայմանագրում, ինչպես նաև գովազդային պատվերներում սահմանված ժամկետներում, պայմանագրի ու գովազդային պատվերների պայմաններին համապատասխան:

2.1.2. Ծառայությունների ընդունման և մատուցման ժամանակ հայտնաբերված թերությունների մասին Գովազդատուից տեղեկությունը ստանալու օրվանից ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել բոլոր հայտնաբերված թերությունները:

2.1.3. Ծառայությունները Գովազդատուին մատուցել պատշաճ որակով, ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն:

2.1.4. Կազմակերպել սույն պայմանագրով նախատեսված գովազդային կրիչների սպասարկումը (մաքրության ապահովումը, լուսավորությունը՝ գիշերային որոշ ժամերի) սույն պայմանագրի գործողության ողջ ընթացքում:

2.1.5. Գովազդային պաստառների վնասման դեպքում իր ուժերով անհապաղ վերականգնել վնասված գովազդային պաստառը:

2.1.6. Անհապաղ վերացնել Գովազդատուի կողմից Գովազդի տարածման ծառայություններում հայտնաբերված թերությունները:

2.1.7. Առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության, չկատարել Գովազդատուի կողմից տրամադրված Գովազդի բովանդակությունից շեղում:

2.1.8. Պայմանագիրը կնքելուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես նաև Պայմանագրի գործողության ողջ ընթացքում՝ ըստ Գովազդատուի պահանջի ներկայացնել վերջինիս ՀՀ, քաղաք Երևանում (անհրաժեշտության պարագայում նաև ՀՀ մարզերում) արտաքին գովազդի բիլբորդերների կամ այլ արտաքին գովազդի տեղադրման վայրերի վերաբերյալ Գովազդակրի ունեցած թույլտվությունները:

2.2. Գովազդակիրը իրավունք ունի՝

2.2.1 Ծառայությունները մատուցելու համար երրորդ անձանց հետ կնքել պայմանագրեր միայն Գովազդատուի հետ նախնական գրավոր համաձայնեցմամբ, ընդ որում Ծառայությունների մատուցման շրջանակներում երրորդ անձանց ցանկացած գործողության համար պատասխանատվություն է կրում Գովազդակիրը:

2.2.2. Չընդունել և չտարածել «Գովազդատու»-ի կողմից տրամադրված գովազդային տեղեկատվությունը, եթե այն իր բովանդակությամբ և կառուցվածքով չի համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին: Նման դեպքերում Գովազդակիրը պարտավոր է անհամապատասխանությունների վերաբերյալ անհապաղ հայտնել Գովազդատուին:

2.3. Գովազդատուն իրավունք ունի՝

2.3.1. Ցանկացած ժամանակ ստուգել Գովազդակրի կողմից մատուցվող Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը.

2.3.2. Փաստացի մատուցված Ծառայությունների ու հանձնման-ընդունման ակտի միջև անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում Գովազդատուն իրավունք ունի ընդունել ծառայությունները չվիճարկվող մասով և վճարել վիճարկվող մասի համար վեճը ըստ էության լուծելուց հետո:

2.3.3. Ցանկացած պահի միակողմանիորեն վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախօրոք 15 /տասնհինգ/ օր առաջ տեղեկացնելով Գովազդակրին:

2.3.4. Սույն Պայմանագրով իր ակնկալած արդյունքին հասնելու նպատակով Գովազդակրին տալ Ծառայությունների մատուցմանը վերաբերելի ողջամիտ ցուցումներ:

2.3.5. Գովազդի տարածման ծառայություններում թերություններ հայտնաբերելու դեպքում առաջարկել Գովազդակրին անհապաղ վերացնել մատնանշված թերությունները:

2.3.6.1. թույլ է տվել իր կողմից ստանձնած պայմանագրային պարտականությունների խախտում, և իր կողմից թույլ տված խախտումը վերացնելու մասին ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում չի վերացրել այն:

2.3.6.2. Պայմանագրով սահմանված ժամկետներում չի մատուցել Ծառայությունները կամ դրանց մի մասը,

2.3.6.3. այլ կերպ թույլ է տվել սույն Պայմանագրի էական խախտում:

2.3.7. Գովազդի տարածման ծառայություններում թերություններ հայտնաբերելու դեպքում առաջարկել Կատարողին անհապաղ վերացնել մատնանշված թերությունները:

2.4. Գովազդատուն պարտավոր է

2.4.1. Մատուցված Ծառայությունների դիմաց վճարումները կատարել Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում.

2.4.2. Հարկային հաշիվը ստանալուց հետո ոչ ուշ քան 2 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել այն, կամ գրավոր տեղեկացնել Գովազդակրին հայտնաբերված թերությունների մասին, պահանջելով դրանց վերացումը:

2.4.3. Գովազդակրի պահանջով 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել լիցենզիաները (կամ դրանց պատշաճ կարգով վավերացված պատճենները), եթե գովազդվող գործունեությունը ենթակա է լիցենզավորման և /կամ այլ համապատասխան փաստաթղթերը կամ դրանց պատշաճ վավերացրած պատճենները), եթե գովազդվող ապրանքները և/կամ ծառայությունները ենթակա են պարտադիր հավաստագրման (հաստատման, արտոնագրման, թույլտվության) ինչպես նաև սահմանված կարգով ներկայացնում է տեղեկություններ գովազդում օգտագործված հեղինակների կամ կատարողների ստեղծագործությունների կամ կատարումների մասին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3.1. Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմում է 3 546 720 (երեք միլիոն հինգ հարյուր քառասունվեց հազար յոթ հարյուր քսան) ՀՀ դրամ, ներառյալ բոլոր կիրառելի հարկերը և տուրքերը: Սույն կետով սահմանված արժեքը ներառում է Գովազդակրի կողմից իրականացվելիք բոլոր ծախսերը: Պայմանագրի ընդհանուր արժեքը Գովազդատուն վճարում է հետևյալ կարգով.

3.1.1. Պայմանագրի ընդհանուր արժեքի 50%-ը՝ որպես կանխավճար, պայմանագրի երկկողմանի ստորագրումից հետո մինչև 21.11.2022թ.:

3.1.2. պայմանագրի ընդհանուր արժեքի մնացած մասը՝ հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի երկկողմանի հաստատվելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

3.2. Ծառայությունների մատուցման ավարտից հետո Գովազդակիրը պարտավորվում է 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում Գովազդատուին ներկայացնել իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը և հարկային հաշիվը:

3.3. Հանձնման-ընդունման ակտը ներկայացնելու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Գովազդատուն Գովազդակրի աջակցությամբ ստուգում է մատուցված Ծառայությունների որակը և ծավալը, և առարկությունների բացակայության դեպքում հաստատում հանձնման-ընդունման ակտը և հարկային հաշիվը: Ընդ որում, սույն Պայմանագրի շրջանակներում հանձնման-ընդունման ակտի և հարկային հաշիվի հաստատման օր է համարվում դրանց վրա Կողմերից վերջինի ստորագրության (կնիքի առկայության դեպքում նաև կնքման) օրը:

3.4. Այն դեպքում, երբ մատուցված Ծառայություններում հայտնաբերվում են թերություններ, Գովազդատուն չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և սույն Պայմանագրի 3.4. կետում նշված ժամկետում Կատարողին գրավոր ներկայացնում է հանձնման-ընդունման ակտը չհաստատելու հիմնավորում՝ նշելով մատուցված Ծառայություններում հայտնաբերված թերությունները և սահմանելով դրանց վերացման ողջամիտ ժամկետ կամ սույն Պայմանագրի 2.3.6 կետով սահմանված կարգով միակողմանի լուծում է Պայմանագիրը:

3.5. Գովազդատուն իրեն մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարը փոխանցում է Պայմանագրի 9-րդ բաժնում նշված Գովազդակրի բանկային հաշվին:

3.6. Հանձնման-ընդունման ակտը և հարկային հաշիվը Գովազդատուի կողմից ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս կողմից չհաստատվելու և թերությունները հիմնավորող գրավոր առարկություններ չներկայացնելու դեպքում դրանք համարվում են հաստատված ներկայացման օրը:

3.7. Գովազդակրի կողմից մատուցված Ծառայությունների դիմաց վճարելու Գովազդատուի պարտավորությունը համարվում է կատարված դրամական միջոցները Գովազդատուի բանկային հաշվից ելքագրման պահին:

3.8. Կողմերից յուրաքանչյուրը կրում է իրեն սպասարկող բանկում առաջացած ծախսերը:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Գովազդակրի կողմից Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման ժամկետները խախտելու դեպքում Գովազդատուն կարող է Գովազդակրի նկատմամբ կիրառել տույժ՝ չմատուցված Ծառայությունների արժեքի՝ կետանցի յուրաքանչյուր ուշացրած օրացուցային օրվա համար 0,1%-ի (գրո ամբողջ մեկ տասնորդական) չափով:

4.2 Գովազդատուի կողմից վճարման պարտավորությունները չկատարելու դեպքում Գովազդակիրը կարող է Գովազդատուի նկատմամբ կիրառել տույժ՝ չվճարված գումարի 0,1%-ի (գրո ամբողջ մեկ տասնորդական) չափով՝ կետանցի յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար:

4.3. Պայմանագրով սահմանված բոլոր տույժերը կարող են կիրառվել այն պահանջելու իրավունք ունեցող կողմի հայեցողությամբ և ենթակա են վճարման այն դեպքում և այն պահից սկսած երբ դուրս է գրվել համապատասխան հաշիվը: Կողմը վճարում է տույժը մյուս կողմից համապատասխան հաշիվ դուրս գրելու և այն ներկայացնելու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

4.4. Տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պատասխանատվությունից:

4.5. Կողմերի կամքից անկախ ծագած պայմանագրի կատարման անհնարինության դեպքում Գովազդատուն Գովազդակրին վճարում է փաստացի կատարած ծառայությունների դիմաց:

4.6. Գովազդատուն փոխհատուցում է Գովազդակրի կողմից կրած վնասները, ինչպես նաև Գովազդակրի կողմից կատարած այլ ծախսերը, որոնք Գովազդակիրը կրել է Գովազդատուի կողմից տրամադրած «Գովազդի մասին» ՀՀ օրենքին կամ այլ իրավական ակտերին հակասող գովազդային նյութերի տեղադրման արդյունքում:

4.7. Գովազդակիրը պատասխանատվություն չի կրում Գովազդատուի կողմից տրամադրված գովազդային նյութերի բովանդակության համար:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել և կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 10 (տաս) օրից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

Կողմերը պայմանավորվում են, որ Պայմանագրի դրույթները և Կողմերի միմյանցից ստացվող ամբողջ տեղեկատվությունը ինչպես նաև՝ «Պայմաններ» նշված կամ միայն ստացողի համար նախատեսված տեղեկատվությունը համարվում է գաղտնի (հետագայում՝ «Գաղտնի տեղեկատվություն») և պայմանավորվում են չբացահայտել, չտարածել, չտպագրել կամ այլ կերպ նման տեղեկատվությունը չտրամադրել որևէ երրորդ կողմի՝ նախապես չստանալով մյուս Կողմի գրավոր թույլտվությունը՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Պայմանագրի ժամկետի ավարտից հետո սույն կետը պահպանում է իր ուժը և գործում է երեք տարի Պայմանագրի դադարեցման կամ լուծման օրվանից սկսած:

Եթե Կողմերի միջև կնքվել է Համաձայնագիր գաղտնի տեղեկատվության չիրապարակման մասին (այսուհետ՝ Համաձայնագիր), որը գործում է սույն Պայմանագրի գործողության ընթացքում, ապա հնարավոր տարածայնությունների դեպքում նման Համաձայնագրի դրույթները կգերակայեն սույն կետի դրույթների նկատմամբ:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1 Պայմանագրի և դրանով կարգավորվող հարաբերությունների նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենսդրությունը:

7.2 Պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

7.3 Վեճերը և տարաձայնությունները, որոնք կարող են առաջանալ Պայմանագրի պայմանները կատարելու ընթացքում, հնարավորության դեպքում կլուծվեն բանակցությունների միջոցով:

7.4 Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճը լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատական կարգով:

8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման օրվանից: Մինչև Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը ստորագրված Գովազդային պատվերների մասով Պայմանագիրը շարունակվում է համարվել ուժի մեջ՝ մինչև Կողմերի կողմից այդ Գովազդային պատվերներով սահմանված պարտավորությունների ամբողջական կատարումը:

8.2 Կողմերի միջև վարվող ողջ հաղորդակցությունը կատարվում է գրավոր կամ կողմերի միջև վարված բանակցությունների վերաբերյալ կազմված արձանագրությունների միջոցով: Բոլոր ծանուցումները, որոնք ուղարկվում են փոստով, ֆաքսիմիլային կապի միջոցներով ու էլեկտրոնային փոստով կողմերի՝ պայմանագրում

Հավելված թիվ 1
 առ 04.11.2022 Գովազդային թիվ 01 պատվերի «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի և
 «Իմիջ Մ.Գ» ՍՊԸ-ի միջև

16.11.2022-12.12.2022 թթ. Ժամանակահատվածում Ծառայությունների մատուցման տեղեկագիր

#	Հասցե		Կողմ	ք/մ	1 քմ արժեք	Ընդհանուր արժեք	լուսավորություն
1	Երևան	Տ. Պետրոսյան 2, դեպի Երևան սիթի ս/մ	A	18	5000	90000	առկա
2	Երևան	Ռուբինյանց 8	A	18	5000	90000	առկա
3	Երևան	Թբիլիսյան խճ. Գազարոմ Արմենիայի դիմաց B	B	18	5000	90000	առկա
4	Երևան	Ազատության պող. 5, Լև Տոլստոյի անվան Դպրոցի դիմաց	A	18	6000	108000	առկա
5	Երևան	Ազատության պող., Երազ մանկական կենտրոնի դիմաց	A	18	6000	108000	առկա
6	Երևան	Հր. Քոչար 8, Մեդ բժշկական կենտրոնի դիմաց	B	18	6000	108000	առկա
7	Երևան	Արշակունյաց պող. 1, դեպի Երևան մոլ, բենզալցակայանի մոտ դիմաց	B	18	5000	90000	առկա
8	Երևան	Սարալանջի պող 2	A	18	5500	99000	առկա
9	Երևան	Սարալանջի պող 2	B	18	5500	99000	առկա
10	Երևան	Իսակովի պող. 10/1 Կենտրոնից Օդանավակայան	B	18	5000	90000	առկա
11	Երևան	Իսակովի պող. 11/1 Օդանավակայանից Կենտրոն	B	18	5000	90000	առկա
12	Գյումրի	Խրիմյան Հայրիկ-Անկախության խաչմերուկ	A	18	4800	86400	բացակա
13	Գյումրի	Խրիմյան Հայրիկ-Անկախության խաչմերուկ	B	18	4800	86400	բացակա

14	Գյումրի	Սայաթ-Նովա, Ակադեմիայի դիմաց, Անկախության հրապարակ	A	18	4800	86400	բացակա
15	Գյումրի	Սայաթ-Նովա, Ակադեմիայի դիմաց, Անկախության հրապարակ	B	18	4800	86400	բացակա
16	Դիլիջան	քաղաքի մուտք Հաղարծին ռեստորանի դիմաց	A	18	5500	99000	բացակա
17	Դիլիջան	Իջևանի խճուղի, սկբնամաս	A	18	5500	99000	բացակա
18	Ծաղկաձոր	Մ.Մկրտչյան խաչմերուկ, 37/2 – Ե. Չարենց փ. Խաչմերուկ	A	18	5500	99000	բացակա
19	Երևան-Աշտարակ	Մ1/15.3 կմ.	A	18	3000	54000	բացակա
20	Երևան-Աշտարակ	Մ1/25 կմ. Մուղնու խաչմերուկ	A	18	4000	72000	բացակա
21	Երևան-Սևան մայրուղի	Մ4/9.0 կմ	B	27	3000	81000	բացակա
22	Երևան-Սևան մայրուղի	Մ4/22.0 կմ.	A	18	3000	54000	բացակա
23	Երևան-Սևան մայրուղի	Մ4/49.5 կմ.	A	18	3000	54000	բացակա
24	Երևան-Սևան մայրուղի	Մ4/54.1 կմ.	A	18	3000	54000	բացակա
Ընդամենը						2073600	
Ընդամենը՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և տուրքերը						2488320	

ԳՈՎԱԶԴԱՏՈՒ

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն»
ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 01540062
«Ինելկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022082671001

Գործադիր տնօրեն՝ Հ. Մովսիսյան
/ստորագրություն/
Կ.Տ.



ԳՈՎԱԶԴԱԿԻՐ

«Իմիջ Մ.Գ.»ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 7/1 52
ՀՎՀՀ՝ 05533192
«Կոնվերսանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1930042050040100

Գլխավոր տնօրեն՝ Ա. Կարամյետյան
/ստորագրություն/
Կ.Տ.

